ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
«ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЗАО« ИДЖЕВАНИ БЖШКАКАН
КЕНТРОН»
ТАВУШСКОГО МАРЗПЕТАРАНА

REPUBLIC OF ARMENIA,CJSC «IJEVANI BJSHKAKAN KENTRON»

377260 ՀՀ ,ք.Իջևան, Նալբանդյան 1
ՀԸ,,г.Иджеван,ул. Налбандяна 1
RA IJEVAN St Nalbandyan 1

☎ 00374 263 40313
Էլ. փոստ – ijevanmedikalcenter@mail.ru

N 461
02.09.2025թ.

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-ի
Տնօրեն Տիգրան Սիրեկանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանգիրը միակողմանի լուծման մասին

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Սորելլի» ՍՊԸ-ի միջև 21.07.2025թ. կնքված N ԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/18-1 ծածկագրով «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ժամկետում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Հավելված N1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ***Թվային Ստացիոնար Ուլտրաձայնային հետազոտման համակարգ 3 տվիչների/կոնվեքս, գծային, ներխոռոչային/ առկայությամբ՝ P25 Elite /SonoScape/*** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սակայն մի շարք զգուշացումներից հետո Վաճառողը մինչ օրս ապրանքը չի մատակարարել և հստակ պատասխան չկա, թե երբ կկարողանա մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ամբողջությամբ լուծում է «Սորելլի» ՍՊԸ-ի միջև 21.07.2025թ. կնքված N ԻԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/18-1 ծածկագրով պայմրանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

եթե խախտվել է պայմանգրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուր կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները, ապա «Սորելլի» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի

Տնօրենի Ժ/Պ՝ Ա.Մելիքսեթյան

Կատարող՝
գնումների համակարգող
Արփինե Բուղդարյան
Հեռ. (0-33) 261014